

ՀԱՅԱԳԵՏՆԵՐ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Հետաքրքրական տեղեկութիւններ են հաղորդում «Հանդէս ամսօրեան» և «Բանասէրը» ներկայումս Նւրոպայում հայ լեզուով պարապողների մասին, որ քաղաածօրէն առաջ ենք բերում այստեղ.

Ստրասբուրգ քաղաքում դասախօսում է պրօֆ. Հիւբշմանը, որ յայտնի է իւր «Armenische grammatik» ընդարձակ աշխատութեամբ, որի դեռ միայն 1 հատորի ա. և բ. գրքերն են լոյս տեսել, որքան մեզ յայտնի է: Ներկայումս Հիւբշմանը դադարեցրել է հայերէնի դասախօսութիւնը՝ ունկնդիրներ չունենալու պատճառով:

Բերլինի համալսարանում հայերէնի ուսուցչապետն է դոկտ. Ֆինկը, որ միայն երեք աշակերտ ունի, երեքն էլ լեզուաբան, որոնք անցեալ կիսամեկի վերջն արդէն Մովսէս Խորենացու գիրքն էին կարդում ու թարգմանում: Սոցանից երկուսը՝ Ռուդօլֆ Ֆուքսը և Օտտօ Գիւնէնթալը պարապում են համեմատական լեզուագիտութեամբ, իսկ երրորդը՝ Գօտհօլդ Վայլը՝ արևելեան, գլխաւորապէս սեմական լեզուագիտութեամբ:

Հայդելբերգի համալսարանում հայերէն լեզուի աւանդույթ յանձնուած է դոկտ. Բ. Նալաթեանցին: Վերջինս առաջ դասախօսում էր Բերլինում, ուր աշակերտեցան նորան Զիգլին, դր. Շէֆտելովիչ, որ ծանօթ է իւր «Հին հայերէնի ձայնագիտութեան մասին» գրութեամբ և րաբբի դր. Ֆուքսը, իսկ Հայդելբերգի համալսարանում ունի երեք ունկնդիրներ՝ դր. Թ. Էօստէրրայխէր, Հայդելբերգի ժողովրդապետը, աստուածաբան և քաջ սեմագէտ. սա Հայերէն սովորում է Ս. Գրքի քննական ուսումնասիրութեան համար: Միևնոյն նպատակով հայերէն է սովորում նաև Յովհ. Գրաֆը, աստուածաբանութեան մի ուսանող, երրորդն է՝ Էդուարդ Պրօկոշը, Զիկագոյի համալսարանի երկտասարդ մագիստրոսը, հմուտ հնդեւրոպագէտ և բուն բանասէր: Նալաթեանը հայերէնն աւանդում է Մէյէի և Այտնեա-

նի քերականութեան դասագրքերով և Կարիերի բարեփոխած Լաուէրի քերականութեամբ:

Օքսֆորդի համալսարանում, գրում է պրոֆ. Կօնէրիբը, մի քանի նշանաւոր անձնաւորութիւններ կան, որոնք հայերէն գիտեն: Պրոֆ. Մարգօլիութը, որ միանգամայն արարերէնի ուսուցչապետ է, նոյնպէս և պր. Գօլլէյ, Magdalen College-ի ուսուցչապետներից մէկը և Bibliotheca Bodleiana-ի մատենադարանապետը և Ֆ. Բրիգթման, որ նոյն կօլլէժի ուսուցչապետն է և հեղինակ Արեւիկան պատարագամատոյցների թարգմանութեան մի հատորի, որի մէջ կայ նաև Հայ պատարագամատոյցի թարգմանութիւնը:

Կէմբրիջի մէջ կան պրոֆ. Արմ. Ռօբինզօն, այժմ վերատեսուչ Վեստմինստրի, պր. Մակլէան ուսուցչ. Christ's College-ի, հրատարակիչ Խօթանասնից թարգմանութեան նոր հրատարակութեան, և պր. Մօնտան Ռօդէս Ժէմս, Կէմբրիջի թանգարանապետը:

Դուրլինում յայտնի է հայագէտ դր. Շարլը (Charles) Trinity College-ի աստուածաշնչեան յունարէնի ուսուցիչը:

Ինքը պրոֆ. Կօնէրիբը հրատարակելու է երկաթագիր Մաշտոցի անպլ. թարգմանութիւնը, նոյնպէս և ժամագրքի և Փարիզի (Fonds Armen. 20) Տաւամակի ժողովածուն:

Փրայդուրգ քաղաքում կայ հայերէնագէտ պրոֆ. դր. Սիմօն Վէբերը, որ յայտնի է «Նշնկայ ընդէմ աղանդոց գործի յօրինման ժամանակն ու վաւերականութիւնը», «Արարատը ս. Գրոց մէջ», «Կաթօլիկ հեղեցին Հայաստանում» աշխատութիւններով:

Լեմքերգի (Լվով) համալսարանում հայերէնի դասատուն լեհահայ կաթօլիկ վարդապետ է, Դաւիդովիչ (Դաւթեան վ.) ունկնդիրներ են՝ Անդր. Լուկասիւսիւիչ, Կայետան Ամիրովիչ և Յակ. Աքսէնտովիչ—երեք կղերացուներ. բացի սոցանից՝ Յակ. Մօսցօրօ՝ իրաւաբանական բաժնից, երկու օտարագգիք՝ Յոհ. Պիլսցար և Անդր. Գաւրոնսկի՝ բանասիրական բաժնից: Դասախօսութեան ներկայ են լինում և հայագգի Կարլ Բողդանովիչ և օտարագգի էդուարդ Թոմասէլսկի հոգևորականները:

Բուդապէշտի արք. հունգ. գիտութեանց համալսարանի մէջ հայ լեզուն աւանդում է եղիսաբեղուպօլսեցի հայ կաթօլիկ Դուկաս Բադրուպանեան ուսուցչապետը, որ աշխատակցում է Մամոշվարի «Armenia» հունգարերէն ամսաթերթին: Նորան այժմ լսում են՝ Բլանար Եանօս, Լիովի Մօր, Մատուզիկ Իստվան, Սօլիմօս Պալ, Կօնց Էնդրէ, Նագի Կալման, Դեբրեսցէնի

Լէօրինց, Ռատվէյ Եանօս, Կուլցար Էնդէր, Յադէր Ֆէրէնց, Միկլօս, որոնք բոլորն էլ օտարազգի են: Իսկ Հափազանց խրատական և հետաքրքրական է այն հանգամանքը, որ միւլնոյն համալսարանում ուսանում էն բազմաթիւ հայազգի (ի հարկէ հոռմէադաւան) ուսանողներ, որոնք ամենքն էլ մաճառախօս են և իրենց մայրենի լեզուով ամենեւին չեն հետաքրքրւում: «Հայ գաղթականութեան մէջ նշմարուած ծանօթ դժբաղդ երեւոյթ մը» խոստովանում է «Հանդէս ամսօրեան»:

Պաղուայի համալսարանում կայ մի հայազէտ—պրօֆ. Տէցա, որ ունկնդիր չունի:

Փարիզի համալսարանի հայերէնի ուսուցչապետն է պրօֆ. Մէյիէ, որի ունկնդիրներինց այս տարի վկայականի արժանացան Փրանսիացիներ՝ Բաուսդարտ, Գիւվիլիէ Ֆլէօրի, Ուստրի և Սիւսօնը. իսկ երկրորդինց երրորդ դասարան են փոխուել Միշօն և Յովսէփ Ռէրի, որոնցից վերջինը ամուսնացած է Թիֆլիսեցի մի ազնիւ հայուհու հետ և հայազխտութեան մէջ մեծ ապագայ է խոստանում:

Վեննայի համալսարանում հայերէն աւանդում է պրօֆ. Բիտտները: Վեննայում կայ նաև ինքնուստ հայազէտ Իւլիոս Ռուդօլֆ արքունական պաշտօնեան:

Աւելացնենք այս ամինի վերայ և մի Յիսուսեան կրօնաւոր Պ. Պէտէրս, որ հայերէնը սովորել է ինքնուստութեամբ նախ Բէլգիայում և ապա Բէյրութում և դիռ նոր է սկսել հրապարակ դալ՝ գերմանական մամուլի մէջ մատենախօսական յօդուածներով:

ՀԱՅ